բան-Թիմուր, փոխելով տեղւոյն անունը, կոչած է Քրբրմ, անելով զայն իւր խանութեան մայրաքաղաք. և այն ոչ մասնաւոր դիտմամբ, այլ յոյժ բնական կերպով։ Եւ յիրաւի, Օրան-Թիմուր նախամեծար համարելով Աղարմիի գիրքը, կանաչազարդ բլուրներով, — քան զծովահայեացն Կաֆայի — ուր և հաստատած է իւր աթոռը, հարկաւ չէր կարող գոհ լինել հայացի Ս. Խաչ անունով կամ Նորա աղաւաղմամբ (Սուրղաթ), այլ իւր սրտին և Թաթար լեզուին յատկութեանց համեմատ, պէտք էր մի Նոր յորջորջումն տալ իւր մայրաքաղաքին. և ահա նա կը կոչէ զայն Քրբրմ, այսինք իմ լեռս կամ լեառն իմ. որ համաձայն է սրտի զգացմանց Նոր իշխեցողին և յատկութեանց Թաթար լեզուին։

Խրբ կամ քրբ բառը կը նշանակէ բլուր. ինչպէս արդէն յայտնի է փոքր ի շատէ ամենայն արևելագիտաց ըմ, իմ, ռմ՝ մասնիկները կը նշանակեն, իբրու ստացական դերանուն իմ, օրինակի համար սրաղրմ (իմ այգիս), էվիմ (իմ տունս), օղլոռմ (իմ որդիս). կամ այսպէս զրուցենք, այդ վերոյիշեալ մասնիկները մեր լեզուին ս դիմորոշին տեղ կը գործածուին Թաթարաց լեզուին մէջ. որով եթէ երկու մասն բաժնեմք քրբրմ բառը՝ կը գտնեմք, քրբ (լեռ) և ըմ (իմ), լեռս. և ահա այդ անունը ԺԳ դարէ և այսր փոխանակած է Սուրղաթ քաղաքին անուան, և մինչև ցայսօր ևս կը կրէ։ Ուստ նախընթաց դարուն վերջերը տիրելով Տաւրիոյ, առ հասարակ նշանաւոր քաղաքաց նախնի հին յունական անուններ տուել են, ինչպէս Սեւաստոպոլ, Սիմֆերոպոլ, Եւպատորիա, Թէոդոսիա։ Այլ Սուրղաթ ունեցած չէ վերանորոգման